ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՆԹԵՈՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/3

ք. Սիսիան «04» Օգոստոս 2021թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Սարգսյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Սիսիանի (Նոր Բակ) <<Նորոգշին>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված պանթեոնի վերակառուցման

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 50 (հիսուն) օրացույցային օրվա ընթացքում:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 53812202 (հիսուներեք միլիոն ութ հարյուր տասներկու հազար երկու հարյուր երկու) ՀՀ դրամ, որից 8968700 (ութ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին, ինչպես նաև հիմք ընդունելով 16 նոյեմբերի 2006 թվականի N 1708-Ն որոշման պահանջները: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է w.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սիսիանի համայնք	**Սիսիանի (Նոր Բակ) <<Նորոգշին>> ԲԲԸ**
ք. Սիսիան, Սիսական 31	**ք.Սիսիան,Շիրակի 13**
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	**ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ Սիսիան մ/ճ**
Հ/Հ 900292101152	**Հ/Հ 220333330359000**
ՀՎՀՀ 09215978	**ՀՎՀՀ 09806674**
Համայնքի ղեկավար _____ **Ա. Մարգսյան**	**Տնօրեն** _____ **Ս. Մաթևոսյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«04» հունվար 2021թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆԹԵՈՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Աշխատանքի միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Աշխատանքի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7
		1. Հողային աշխատանքներ				
1	1-250 1-255	Տարածքի հարթեցում բուլդոզերով 4-րդ կարգի գրունտներում մինչև 20 մ գրունտի տեղափոխումով և փռումով / 1500, 0 քմ /	խմ	300,0	0.25	75.000
2	1-1552	4-րդ կարգի գրունտի քանդում էքսկավատորով	խմ	218,0	0.7	152.600
3	1-962	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով	խմ	43,9	3.7	162.430
4	1-968	Գրունտի ետլիցքի կատարում ձեռքով . տոփանումով	խմ	31,3	1.2	37.560
5	1-1592	Ավելորդ գրունտի բարձում ա/մեքենաները էքսկավատորով	խմ	230,6	0.62	142.972
6	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	խմ	230,6	2.5	576.500
		Ընդամենը				**1147.062**
		Առավելագույն կշիռ				2,55
		2 . Հիմքեր				
7	6.-33	Ե/ բ հիմքերի իրականացում B 15 դասի բետոնից	խմ	43,0	60	2580.000
8	ինֆ.տ.	Ամրան Φ14A500C	տ	0,5	520	260.000
9	ինֆ.տ.	Ամրան Φ12A500C	տ	0,6	520	312.000
10	ինֆ.տ.	Ամրան Φ 8A240C	տ	0,6	550	330.000
11	6-21	Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B 15 դասի բետոնից	խմ	61,9	38	2352.000
		Ընդամենը				**5834.200**
		Առավելագույն կշիռ				13.01
		3 . Պատեր				
12	46-131	Պատերի խարխլված բազալտե ծածկասալերի ապամոնտաժում / նյութի հետ վերադարձով /	մ	203,0	0.9	182.700
13	46-79	250-600 մմ հաստությամբ բազալտե պատերի քանդում /պիտանի նյութի հետ վերադարձով /	խմ	70,8	6.8	481.440
14	8-163	600 մմ հաստությամբ , 2,5 մ բարձրությամբ , մետաղական ցանցերով ամրանավորված պատերի կառուցում՝ օգտագործելով ապամոնտաժված բազալտե քարերը	խմ	20,0	19	380.000
15	8-163		խմ	74,0		

		400 մմ հաստությամբ , 2,0 մ բարձրությամբ , մետաղական ցանցերով ամրանավորված պատերի կառուցում սրբատաշ բազալտե քարով			51	3774.000
16	8-163	400 մմ հաստ . , 0,75-1,8 մ բարձրությամբ , մետաղական ցանցերով ամրանավորված պատերի կառուցում սրբատաշ բազալտե քարով	խմ	36,2	48	1737.600
17	8-163	400 մմ հաստությամբ պատերի կառուցում՝ օգտագործելով ապամոնտաժված սրբատաշ բազալտե քարերը	խմ	12,2	26	317.200
18	8-163	400 մմ հաստությամբ պատերի բարձրացում h = 0,3 մ սրբատաշ բազալտե քարով երկու կողմից	խմ	41,8	71	2967.800
19	8-163	300 մմ հաստությամբ , 0,6 մ բարձրությամբ , մետաղական ցանցերով ամրանավորված պատերի կառուցում սրբատաշ բազալտե քարով	խմ	19,6	52	1019.200
20	6-109	Ե/բ միաձույլ միջուկների իրականացում B 20 դասի բետոնից	խմ	9,80	68	666.400
21	ինֆ.տ.	Ամրան Φ16A500C	տ	0,5	520	260.000
22	ինֆ.տ.	Ամրան Φ12A500C	տ	0,2	520	104.000
23	ինֆ.տ.	Ամրան Φ 8A240C	տ	0,6	550	330.000
24	շուկա	Ցանց պողպատե , ամրանային եռակցված , Вр d=3,0մմ , բջիջը 150 x 150 մմ	քմ	330,0	1.4	462.000
25	15-70	Պատերի խարխլված բազալտե ծածկասալերի մշակում և վերաշարում	քմ	62,2	10.2	634.440
26	15-70	10 սմ հաստությամբ բազալտե ծածկասալերի տեղադրում	քմ	84,0	35	2940.000
27	15-70	5 սմ հաստությամբ բազալտե ծածկասալերի տեղադրում	քմ	44,8	28	1254.400
28	23-229 վեր.	Քանդված շին. նյութերի և աղբի բարձում ա/մեքենաները ձեռքով	տ	81,1	1.3	105.430
29	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	խմ	38,6	2.3	88.780
		Ընդամենը				**17705.390**
		Առավելագույն կշիռ				39.48
		4 . Բազալտե հարթակներ և աստիճաններ				
30	27-36	Բազալտե եզրաքարերի քանդում / նյութի հետ վերադարձով /	մ	37,8	0.9	34.020
31	46-99	Բետոնե հիմքերի քանդում եզրաքարերի տակ	խմ	2,30	6.8	15.640
32	27-82	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 120 x 300 մմ բետոնե հիմքի վրա	մ	60,0	8.7	522.000
33	46-131	Բետոնե հիմքի վրա տեղադրված բազալտե աստիճանաքայլերի ապամոնտաժում /նյութի հետ վերադարձով /	մ	192,0	1.2	230.400
34	46-132	Հարթակների բազալտե սալահատակի քանդում / նյութի հետ վերադարձով /	քմ	346,7	0.9	312.030

35	11-6	Հիմնատակի պատրաստում 20-40 մմ ֆրակցիայի բազալտե խճով 10-20 սմ հաստությամբ	խմ	86,60	7.8	675.480
36	11-11	Երկաթբետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10 սմ հաստությամբ B 12.5 դասի բետոնով / 561,5 քմ /	խմ	56,2	72	4046.400
37	11-221	Սալահատակի կառուցում 4 սմ հաստությամբ բազալտե սալերից ց/ավազե շաղախի վրա	քմ	505,5	14	7077.000
38	11-221	Սալահատակի կառուցում քանդված բազալտե սալերից խճե նախաշերտի վրա / 120 x 0,6 մ /	քմ	72,0	7.7	554.400
39	6-92	Աստիճանների ե/բ սալվածքի իրականացում B 12.5 դասի բետոնով	խմ	23,8	65	1547.000
40	46-131 Գ=1,2	1000x 400x120 մմ չափերով բազալտե աստիճանաքայլերի տեղադրում	մ	5,0	9.5	47.500
41	46-131 Գ=1,2	2000x 400x120 մմ չափերով բազալտե աստիճանաքայլերի տեղադրում	մ	108,0	9.5	1026.000
42	46-131 Գ=1,2	2200x 400x120 մմ չափերով բազալտե աստիճանաքայլերի տեղադրում	մ	66,0	9.5	627.000
43	46-131 Գ=1,2	3000x 400x120 մմ չափերով բազալտե աստիճանաքայլերի տեղադրում	մ	48,0	9.5	456.000
44	46-131 Գ=1,2	3000x 300x150 մմ չափերով բազալտե աստիճանաքայլերի տեղադրում	մ	12,0	9.2	110.400
45	15-20	Աստիճանների պատերի երեսապատում բազալտե սալերով 20 մմ հաստ.	քմ	10,8	15	162.000
46	23-229 վեր.	Ապամոնտաժված շին. նյութերի բարձում ա/մեքենաները ձեռքով	տ	40,0	1.3	52.000
47	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	խմ	17,0	2.6	44.200
		Ընդամենը				**17539.470**
		Առավելագույն կշիռ				39,11
		Գիշերային լուսավորություն				
48	1-962 Գ=1,2	4-րդ կարգի գրունտի քանդում 0,3x0,3 մ չափերով խրամուղում ձեռքով	խմ	32,4	3.7	119.880
49	1-966	Փոսորակի քանդում ձեռքով IYկարգի գրունտում	խմ	2,0	3.7	7.400
50	21-305 վեր.	Հենասյան բարձում ավտոկռունկով և բեռնաթափում	տն	0,6	1.3	0.780
51	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում 3 կմ հեռավորության վրա	տն	0,6	2.9	1.740
52	8-406-11	6,8մ երկարության հենասյան տեղադրում D=89x3,5մմ մետաղական խողովակից	հատ	12,0	49	588.000
53	6-13	Սյան հիմքի բետոնացում B 7.5 դասի բետոնով	խմ	1,9	48	91.200
54	8-366-1	Մետաղական հենասյան վրա լուսամփոփի ամրացման համար մեկ ճյուղանի կրոնշտեյնի տեղադրում Φ 25x2,5 մմ, l=1,1մ մետաղական խողովակից	հատ	12,0	2.5	30.000
55	8-366-1	Մետաղական 30x30x3 մմ անկյունակից (l=40սմ) պլանկայի տեղադրում	հատ	12,0	1.5	18.000
56			հատ	24,0	2	48.000

	8-366-1	Φ14 A I դասի ամրանից L= 400 մմ անկերի տեղադրում ճենապակյա մեկուսիչի հետ միասին				
57	8-594-1	Հենասյան վրա լուսամփոփի / ԺԿՈՒ-150 /տեղադրում, էներգախնայող 65 վտ լամպով	հատ	12,0	12	144.000
58	8-604-2	/ LED / լուսադիոդային լուսարձակների տեղադրում 100 վտ հզորութ.	հատ	10,0	14	140.000
59	8-288-5	АПВ 1х10 մմ2 ալյումինե հաղորդալարերի մոնտաժում	մ	960,0	0.2	192.000
60	8-402-1	АВВГ 2х4,0 մմ2 ալյումինե մալուխի մոնտաժում	մ	420,0	0.35	147.000
61	շուկա	Ճկախողովակ Φ = 25 մմ	մ	360,0	0.25	90.000
62	8-573-6	400х300х200 մմ չափերով մետաղական արկղի պատրաստում և տեղադրում կախովի կողպեքով	հատ	1,0	13	13.000
63	8-525-1	Ավտոմատ փոխարկիչների տեղադրում,25Ա	հատ	1,0	17	17.000
64	8-574-55	էլեկտրական ժամանակի ռելեի տեղադրում	հատ	1,0	22	22.000
65	8-613-1	Միաֆազ հաշվիչի տեղադրում	հատ	1,0	54	54.000
66	15-614	Մետաղական հենասյան և այլ.մետաղական.մասերի յուղաներկում 2շերտ	քմ	25,7	1.2	30.840
67	1-969	3-րդ կարգի գրունտի հետլիցք և փռում ձեռքով	խմ	34,4	1.1	37.840
		Ընդամենը				**1792.680**
		Առավելագույն կշիռ				3,92
		Զրամատակարարում				
68	1-1552	4-րդ կարգի գրունտի քանդում 0,4х1,1 մ չափերով խրամուղում էքսկավատորով	խմ	167,2	0.7	117.040
69	1-962 Զ=1,2	Նույնը , ձեռքով	խմ	8,8	3.7	32.560
70	23-1	Ավազի նախապատրաստական շերտի փռում h = 10 սմ	խմ	16,0	7.5	120.000
71	22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում խրամուղում Φ 25х1,8 մմ / ձևավոր մասերի տեղադրումով և հիդրավլիկ փորձարկումով /	մ	400,0	0.5	200.000
72	16-134	Փական Φ 25 մմ	հատ	16,0	3.4	54.400
73	22-397	Միացում գործող գծին	տեղ	1,0	13.5	13.500
74	23-1	Խողովակաշարի ծածկում ավազի շերտով h = 10 սմ	խմ	16,0	7.5	120.000
75	1-969	3-րդ կարգի գրունտի հետլիցք և փռում ձեռքով	խմ	176,0	0.95	167.200
		Ընդամենը				824.700
		Առավելագույն կշիռ				1,83

Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ Շահույթ՝ 11% և չնախատեսված ծախսեր 1.5%

Ընդամենը	44 843.502
	100%
ԱԱՀ 20 %	8968.70
Ընդամենը	**53812.202**

* Կապալառուն աշխատանքները կատարում է

Չափաբաժին 1 – ՀՀ Սյունիքի մարզի, ք.Սիսիան:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101152
ՀՎՀՀ 09215978

/Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սիսիանի (Նոր Բակ) <<Նորոգշին>> ԲԲԸ
ք.Սիսիան,Շիրակի 13
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ
ՓԲԸ Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330359000
ՀՎՀՀ 09806674

Տնօրեն _____ **Ս. Մաթևոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«04» օգոստոս 2021թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆԹԵՈՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*Սիսիան համայնքի պանթեոնի վերակառուցման աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	50 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101152
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սիսիանի (Նոր Բակ) <<Նորոգշին>> ԲԲԸ
ք.Սիսիան,Շիրակի 13
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ
ՓԲԸ Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330359000
ՀՎՀՀ 09806674

Տնօրեն _____ **Ս. Մաթևոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«04» Օգոստոս 2021թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700	*Սիսիան համայնքի պանթեոնի վերակառուցման աշխատանքներ*	-	-	-	-	-	-	53812202	53812202	53812202	53812202	53812202	53812202	53812202

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101152
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար _____ **Ա. Սարգսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սիսիանի (Նոր Բակ) <<Նորոգշին>> ԲԲԸ
ք.Սիսիան,Շիրակի 13
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ
ՓԲԸ Սիսիան մ/ճ
Հ/Հ 220333330359000
ՀՎՀՀ 09806674

Տնօրեն _____ **Ս. Մաթևոսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«04» օգոստոս 2021թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«04» Օգոստոս 2021թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն